ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Հնաբերդ, 098025050, ararathnaberd@yandex.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ապրիլի 2017թվականի N 12

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հնաբերդ համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 28-ի թիվ 05 հերթական նիստի օրակարգը.

•Հնաբերդ համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՇՈՒՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ
3. ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈՂԱՅ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Հնաբերդ, 098025050, ararathnaberd@yandex.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2017թվականի N 13-Ն

## ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղակա ն ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել համայնքի ղեկավարին Հնաբերդ համայնքի 2017 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

Եկամտային մաս

1. Վարչական բյուջեի եկամտային մասի «Հարկեր և տուրքեր», այդ թվում «Գույքահարկ փոխադրամիջոցներից» կետը ավելացնել 138.0 հ.դ.-ով և սահմանել ընդամենը 2 000.0 հ.դ.:

2. Վարչական բյուջեի եկամտային մասի «Հարկեր և տուրքեր», այդ թվում «Հողի հարկ, որից ֆիզիկական անձանցից» կետը ավելացնել 100.0 հ.դ.-ով և սահմանել ընդամենը 1 800.0 հ.դ.:

3. Վարչական բյուջեի եկամտային մասի «Այլ եկամուտներ», այդ թվում «Մուտքեր տույժերից և տուգանքներից», որից «Վարչական իրավախախտումների համար» կետը ավելացնել 600.0 հ.դ.-ով և սահմանել ընդամենը 610.0 հ.դ.:

4. Վարչական բյուջեի եկամտային մասի «Ընդամենը եկամուտներ» կետը ավելացնել 838.0 հ.դ.-ով և սահմանել ընդամենը 15 171.6 հ.դ.:

Ծախսային մաս

1. Վարչական բյուջեի ծախսային մասը ավելացնել 838.0 հ.դ.-ով և սահմանել ընդամենը 15 171.6 հ.դ:

2. Ավելացող 838.0 հ.դ. գումարը բաշխել հետևյալ կերպ.
ա/ 38.0 հ.դ.-ը հատկացնել Վարչական բյուջեի ծախսային մասի 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին՝ համայնքապետարանի համար տնտեսական ապրանքներ ձեռքբերելու,

բ/ 500.0 հ.դ.-ը հատկացնել Վարչական բյուջեի ծախսային մասի 04.05.01.58 (Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված

4251 (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածին՝ Հնաբերդ համայնքի փողոցների խճապատման համար,

գ/ 300.0 հ.դ.-ը հատկացնել Վարչական բյուջեի ծախսային մասի 08.02.04.51 (Մշակութային միջոցառումների իրականացում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4267 (Կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածին՝ Հնաբերդ համայնքում կայանալիք «Տոլմայի փառատոնի» կազմակերպման համար:

**ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ**
**Ծախսային մաս**

1. Ֆոնդային բյուջեի ծախսային մասի 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5121 (Տրանսպորտային սարքավորումներ) հոդվածից 100.0 հ.դ. տեղափոխել 04.05.01.58 (Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում) հոդվածի վրա:

2. Ֆոնդային բյուջեի ծախսային մասի 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5122 (Վարչական սարքավորումներ) հոդվածից 112.0 հ.դ. տեղափոխել 04.05.01.58 (Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում) հոդվածին վրա:

3. Ֆոնդային բյուջեի ծախսային մասի 01.06.01.60 (Գույքի նկատմամբ իրավունքներ գրանցում և տեղեկատվության տրամադրում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5133 (Գիոդեզիական քարտեզագրում) հոդվածից 757 570.9 դրամը տեղափոխել 04.05.01.58 (Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում) հոդվածին՝ Հնաբերդ համայնքի Հ. Շիրազ փողոցի կոպճապատման համար:

4. Ֆոնդային բյուջեի ծախսային մասի 01.06.01.60 (Գույքի նկատմամբ իրավունքներ գրանցում և տեղեկատվության տրամադրում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5134 (Նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 30.0 հ.դ. տեղափոխել 04.05.01.58 (Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5134 (Նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին՝ Հնաբերդ համայնքի փողոցների խճապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման համար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՇՈՒՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ

3. ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈՂԱՅ

5. ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ